ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունիսի 2025 թվականի N 776-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1554-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 1554-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման նախաբանում «22» թիվը փոխարինել «23» թվով.

2) որոշմամբ սահմանված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունիսի 23-ից, բացառությամբ սույն որոշմամբ սահմանված հավելվածի 128-րդ կետով հարցազրույցի փուլում հաղթող ճանաչված մասնակցին էլեկտրոնային եղանակով համապատասխան պաշտոնի նշանակելու վերաբերյալ կարգավորումից, որն ուժի մեջ է մտնում

2026 թվականի հունվարի 1-ից: Մինչև 2026 թվականի հունվարի 1-ը հարցազրույցի փուլում հաղթող ճանաչված մասնակցի համապատասխան պաշտոնի նշանակումն իրականացվում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով:

3. Մինչև սույն որոշմամբ սահմանված հավելվածի 128-րդ կետի ուժի մեջ մտնելը, հարցազրույցի փուլում հաղթող ճանաչված մասնակիցը կամ հաղթող ճանաչված առաջին և հաղթող ճանաչված երկրորդ մասնակիցները հարցազրույցի անցկացման օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին ուղղված դիմումը թղթային եղանակով ներկայացնում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տվյալ պետական մարմնի անձնակազմի կառավարման ստորաբաժանում, իսկ առանձին ստորաբաժանում չունեցող մարմիններում՝ պատասխանատու անձին:

4. Որոշման գործողությունը չի տարածվում սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահին քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

13.06.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ